«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1319-13.04.2026-ՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարությունը ստորև ներկայացնում է իր դիտողություններն ու առաջարկությունները:

1. Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառն առաջարկում ենք փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի պահանջները:

2. ՀՀ կառավարության 16.01.2025 թվականի «Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրը հաստատելու մասին» N 35-Ն որոշմամբ, եթե ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձը պատիժ է կրում քրեակատարողական հիմնարկում կամ պրոբացիայի շահառու է, ապա համապատասխան ծրագրերն իրականացվում են քրեակատարողական հիմնարկի կամ պրոբացիայի ծառայության կողմից:

Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք նախագծի առաջին հոդվածով տրվող՝ ռեաբիլիտացիոն ծրագիր իրականացնող կազմակերպություն հասկացությունը վերանայել:

3. Իրավական որոշակիության ապահովման նպատակով առաջարկում ենք սոցիալական դեպքի վարման շրջանակներում ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի վերաբերյալ ընտանեկան և կենցաղային բռնության հաշվառման համակարգից ստացված տվյալները ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով օգտագործելու վերաբերյալ կարգավորումը սահմանել առանձին կետով: Ըստ այդմ՝ առաջարկում ենք «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտ-

պանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը «ապաս-տարանների» բառից հետո լրացնել «, ռեաբիլիտացիոն ծրագիր իրականացնող կազմակերպությունների» բառերով, իսկ նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումը նոր բովանդակությամբ նախատեսել որպես 3.1-ին կետ: Միաժա-մանակ անհրաժեշտ է տարանջատել, թե որ տվյալներն են օգտագործվելու անհատական դեպքերի վարման համար, և որոնք՝ ընդհանուր քաղաքականության մշակման և վիճակագրական վերլուծության նպատակով: